2043

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
«21» 02 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0025-23

Ձեռնարկողը՝ ***«Գեոռեյդ» ՓԲԸ***
ք. Երևան, Հր. Քոչարի փ., /8/ 16 Արաբկիր

Գործունեությունը՝ ***Սյունիքի մարզի Մուցքի ոսկու հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 12 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0025-23

<21> 02 2023թ.

Սյունիքի մարզի Մուցքի ոսկու հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Գեոռեյդ» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ, Մուցք և Բռնակոթ բնակավայր

Ներածական մաս. Մուցքի ոսկու հանքավայրը գտնվում է Սյունիքի մարզի Սիսիան խոշորացված համայնքի Մուցք և Բռնակոթ բնակավայրերի սահմաններում, Մուցք գյուղից 3.5կմ հարավ, հարավ-արևելք, Շաղատ գետի վտակ հանդիսացող «Անանուն» ձորակի աջ թևում, Սիսիան քաղաքից 28կմ հեռավորության վրա: Մայրաքաղաքի հետ այն կապվում է 180կմ ասֆալտապատ և 18կմ գրունտային ճանապարհներով: Հանքավայրի մոտակա բնակավայրերից են Մուցք, Անգեղակոթ, Բալակ գյուղերը:

Օգտակար հանածոյի հանքավայրի շահագործման նպատակով հայցվող հողերը ներկայացված են քաղաքացիների և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական (անջրդի վարելահողեր, գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողեր), ջրային և պահուստային հողերով: Բացահանքի օտարման մակերեսը կազմում է 135.48228հա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2-րդ կետի գ. ենթակետի՝ դասակարգվում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Հանքավայրի ոսկու հանքաքարի պաշարները C_1+C_2 կարգերով 2736,9հազ.տ, ոսկու պաշարները 3605,0կգ, արծաթի պաշարները 5730,8կգ քանակներով հաստատվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 18.01.2021թ. N27-Ա հրամանով:

Մուցքի ոսկու հանքավայրը բաղկացած է իրար հարևանությամբ երկու տեղամասերից՝ հարավային և հյուսիսային, որոնց նախագծված բացահանքերը, հատակում (1900մ հորիզոնում) միանում են դառնալով մեկ ընդհանուր (միացյալ) բացահանք: Հանքավայրում հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել 2 փուլերով:

1-ին փուլում նախատեսվում է լեռնային աշխատանքները կազմակերպել հարավային տեղամասում (որը պարունակում է ամբողջ պաշարների մոտ 80%-ը): Այնուհետև մոտ 10 տարի շահագործելուց նետո 2-րդ փուլում շահագործվում են երկու տեղամասերի

պաշարները համատեղ: Նախագծված բացահանքերը վերջնական դիրքում ունեն հետևյալ պարամետրերը՝

Հ/h	Պարամետրերի անվանումը	Չափման միավորը	Ընդհանուր (միացյալ) բացահանք	Այդ թվում	
				1-ին փուլի բացահանք	2-րդ փուլի բացահանք
1.	Առավելագույն երկարությունը	մ	1125	720	
2.	Առավելագույն լայնությունը	մ	675	675	
3.	Մշակման առավելագույն խորությունը	մ	270	270	
4.	Օտարման տարածքը	հա	61,8	33,7	
5.	Հաշվեկշռային պաշարների քանակը	մ³	1112561	606226	506335
		տ	2736900	1491317	1245583
6.	Արդյունաբերական պաշարների քանակը	մ³	1112561	606226	566335
		տ	2736900	1491317	1245583
7.	Հանքաստիճանի թեքման անկյունը	աստ			
	Կողային ժայռային ապարներում		50-55		
	Ալյուվիալ առաջացումներում		45-50		
8.	Հանքաստիճանի բարձրությունը	մ	30		
9.	Անվտանգության բերմայի լայնությունը	մ	12		
10.	Բացահանքի կողերի թեքման անկյունը	աստ	36-38⁰		
11.	Մակաբացման ապարների քանակը	մ³	39172620	19537527	19635093
	Ալյուվիալ առաջացումներ		2616813	1428560	1188253
	Հանքպարփակող ապարներ		36555807	18108967	18446840
	Մակաբացման միջին գործակիցը	մ³/տ	14,31	13,1	15,76

Բացահանքերի տարեկան արտադրողականությունն ընդունված է 150,0հազ.տ ապրանքային հանքաքար, ծառայման ժամկետը կազմում է 19,2 տարի:

Սույն նախագծով նախատեսվում է.

- հանքավայրը մշակել բաց լեռնային աշխատանքներով, առանձին փուլերով:
- 1-ին փուլում մշակել հարավային տեղամասի պաշարների մի մասը մոտ 10 տարի:
- 2-րդ փուլում մշակել երկու տեղամասի պաշարները համատեղ:
- Բացահանքի շահագործման 1-ին փուլում մակաբացման ապարները պահեստավորել արտաքին լցակույտերում, 2-րդ փուլում մշակված տարածությունում:

-Արդյունահանված հանքաքարը տեղափոխել մինչև 1,1կմ հեռավորության վրա նախատեսվող հանքահարստացուցիչ ֆաբրիկա:

ՀՀ ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
RA MINISTRY OF NATURAL RESOURCES ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT
COMMISSION OF EXPERTS

Բացահանքի եզրագիծը սահմանափակող ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 համակարգով

1. Y=8578292.2631 X=4375874.4790
2. Y=8578463.7698 X=4376097.0884
3. Y=8578735.1917 X=4376117.5141
4. Y=8578843.3146 X=4376015.5801
5. Y=8578959.7916 X=4375640.1079
6. Y=8579024.1123 X=4375267.9270
7. Y=8578939.4832 X=4375074.8858
9. Y=8578785.3136 X=4374986.0456
10. Y=8578480.6534 X=4375012.7679
11. Y=8578328.9270 X=4375269.2302

Լեռնահատկացման եզրագծի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 համակարգով

1. Y=8577374.5440 X=4374954.5799
2. Y=8577246.1217 X=4375022.1342
3. Y=8577536.9402 X=4375680.4611
4. Y=8577579.3648 X=4376359.4553
5. Y=8577642.8623 X=4376428.6997
6. Y=8577813.6598 X=4376460.2844
7. Y=8577883.4984 X=4376502.5526
8. Y=8578031.9969 X=4376705.8613
9. Y=8578314.9214 X=4376589.0071
10. Y=8578015.1955 X=4376305.3542
11. Y=8577788.1055 X=4375997.5616
12. Y=8578304.7776 X=4375667.8899
13. Y=8578292.2631 Y=4375874.4790
14. Y=8578463.7698 X=4376097.0884
15. Y=8578735.1917 X=4376117.5141
16. Y=8578843.3146 X=4376015.5801
17. Y=8578959.7916 X=4375640.1079
18. Y=8579024.1123 X=4375267.9270
19. Y=8578939.4832 X=4375074.8858
20. Y=8578785.3136 X=4374986.0456
21. Y=8578480.6534 X=4375012.7679
22. Y=8578328.9270 X=4375269.2302
23. Y=8578311.1820 X=4375562.1647
24. Y=8577915.2622 X=4375629.5687
25. Y=8577949.9540 X=4375411.7465
26. Y=8577374.5440 X=4374954.5799

Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ մակաբացման ապարների ընդունված է բացահանքի միջին ցուցանիշը մոտ 2120,0հազ.մ^3:

Լեռնային աշխատանքները բացահանքում նախատեսվում է կատարել շուրջ տարի, երկու հանգստյան օրով աշխատանքային շաբաթով: Աշխատանքային օրերի քանակը տարում ընդունված է 254օր, աշխատանքային հերթափոխերի քանակը օրում -2, հերթափոխի տևողությունը -8ժամ:

ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Բացահանքի շահագործման համար անհրաժեշտ կատարել հետևյալ լեռնանակապիտալ աշխատանքները:

- Բացահանքի հյուսիս-արևմտյան մասից մոտեցող առկա գրունտային ավտոճանապարհի կարգաբերում L=1100մ, b=10-12մ, V= 1320մ³:
- Մոտեցող գրունտային ավտոճանապարհի 2040մ բարձունքային նիշ ունեցող հորիզոնից մինչև բացահանքի 2090մ բարձունքային նիշ ունեցող հանքաստիճանը գրունտային ավտոճանապարհի կառուցում L=670մ, b=10-12մ, V= 8400մ³:
- Մոտեցող գրունտային ավտոճանապարհի 2040մ բարձունքային նիշ ունեցող հորիզոնից դեպի լցակույտ գրունտային ավտոճանապարհի կառուցում L=1070մ, b=10-12մ, V= 10600մ³:

Բացահանքի 2090մ նիշ ունեցող հանքաստիճանից լեռնային զանգվածի մշակում V= 20704մ³, այդ թվում

ալյուվիալ առաջացումներ – 4230մ³,

-հանքպարփակող ապարներ – 16400մ³,

-հանքաքար – 74մ³ (ուղեկցող հանույթ):

Բացահանքի 2080մ նիշ ունեցող հանքաստիճանից լեռնային զանգվածի մշակում V= 54837,2մ³, այդ թվում

-ալյուվիալ առաջացումներ – 3060մ³,

- հանքպարփակող ապարներ – 49700մ³,
- հանքաքար – 2077,2մ³ (ուղեկցող հանույթ):
- Բարձրադիր ջրհեռացող առվի կառուցում L=855մ, V=188մ³ /ջրհեռացման առվի մնացած մասն անցկացվում է շահագործման ընթացքում/:
- Արդյունաբերական հրապարակի կառուցում – 650մ³:
- Բացահանքի շինարարության տևողությունը որոշված է 8,4 ամիս (0,7տարի):

Բացահանքի բարձրադիր մասի 2160-2030մ նիշ ունեցող հանքաստիճանների բացումը կատարվում է մոտեցող միջհանքային ավտոճանապարհից հորիզոնական բացող կիսախրամների անցումով:

Բացահանքերի խորքային մասի 2020-1900մ նիշ ունեցող հանքաստիճանների բացումը կատարվում է՝ թեք կիսախրամների անցումով:

Բացող կիսախրամների լայնությունը հիմքի մասում ընդունված է 10-12մ, իսկ թեք խրամի թեքությունը 10%:

Բացահանքում հանքային մարմինը մշակելու համար ընդունված է միակողանի, ընդերկայնական և ընդլայնական ընթացքաշերտերով, խորացող մշակման համակարգ, մակաբացման ապարները դեպի արտաքին լցակույտեր տեղափոխումով:

Ելնելով մակաբացման ապարների և օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկություններից, փխրուն կիսաժայռային հիդրոթերմալ փոփոխված ապարների արդյունահանումը կատարվում է առանց նախապատրաստման, իսկ ժայռային հանքպարփակող մակաբացման ապարների 50%-ը և հանքաքարի արդյունահանումը նախատեսվում է կատարել նրանց նախապատրաստումից հետո, նախնական փխրեցման կիրառմամբ:

Ապարների նախնական փխրեցումը նախատեսվում է կատարել հորատապայթեցման աշխատանքների օգնությամբ, հորատանցքային լիցքերի կիրառմամբ:

Հորատանցքերի հորատումը նախատեսվում է կատարել ձեռնարկությունում առկա GP600B հորատման հաստոցով: Ապարների փխրեցման համար նախատեսվում է օգտագործել ուղղաձիգ հորատանցքային լիցքեր:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՐՈՒԹՅՈՒՆ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT
02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Ժայռային մակաբացման ապարների և օգտակար հանածոյի հորատման համար հորատանցքերի տրամագիծը ընդունված է 160մմ:

Հանքաստիճանների մարման ժամանակ եզրագծային հորատանցքերի հորատումը նույնպես կատարվում է GP600B հորատման հաստոցով: Այս դեպքում հորատանցքերի տրամագիծը պետք է լինի 116մմ-ից ոչ ավելի:

Արտաչափերի մանրացումը, ինչպես նաև շեմքերի վերացումը նախատեսվում է կատարել CAT-336 էքսկավատորի հենքի վրա սարքավորված 500մ³/հերթ. արտադրողականությամբ հիդրավլիկ մուրճի միջոցով: Արտաչափերի քանակը ընդունված է 2% հանքաքարի, 0,5% դատարկ ապարների փխրեցվող ծավալներից:

Շեմքերի վերացման համար փխրեցվող ծավալը ընդունված է 1% ընդհանուր փխրեցվող ծավալից:

Լեռնային զանգվածի հիմնական պայթեցման համար որպես պայթուցիկ նյութ ընդունված է ամոնիակային սելիտրայի հենքի վրա տեղում պատրաստվող իգդանիտ: Որպես հրահրիչ պայթուցիկ նյութ ընդունված է ամոնիտ N6-ը:

Որպես պայթեցման միջոցներ ընդունված են էլեկտրահաղորդիչ լարեր, էլեկտրաճայթիչներ, իսկրա (նոնել) C500/1մ, П17,25.42.67/3մ:

Պայթեցման աշխատանքները պետք է կատարվեն հատուկ լիցենզավորված կազմակերպությունների կողմից:

-Պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ մարդկանց համար անվտանգ հեռավորությունը հորատանցքային լիցքերի կիրառման դեպքում – ոչ պակաս 200,0մ:

- Պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ ապարների առանձին կտորների դուրս թռչելու (ցրիվ գալու) դեպքում մարդկանց համար վտանգավոր գոտու շառավիղը - 300,0մ:

- Պայթուցիկ նյութերի պահեստից պայթյունի դեպքում օդային հարվածային ալիքի սահմանային թույլատրելի նվազագույն հեռավորությունը – 300,0մ:

Լեռնային զանգվածի հանույթաբարձման աշխատանքների ժամանակ բացահանքում օգտագործվում են շերեփի 2մ³ տարողությամբ CAT-336 մակնիշի էքսկավատորներ:

Հանքաքարի տեղափոխումը դեպի խոշոր ջարդման արտադրամաս մինչև 1,1կմ, իսկ մակաբացման ապարների տեղափոխումը դեպի արտաքին լցակույտեր (1,8կմ հեռավորության վրա) նախատեսվում է կատարել 31տ բեռնատարողությամբ (թափքի երկրաչափական տարողությունը 22մ³) Hovo Sinatruk, XCMG, MAN TGS կամ նրանց համարժեք այլ ինքնաթափերով:

Մինչև բացահանքի 1-ին փուլի շահագործման վերջը մակաբացման ապարները 19528084մ³ քանակով, այդ թվում ալյուվիալ առաջացումներ -1428560մ³, հանքապարփակող ապարներ -18099524մ³, նախատեսվում է պահեստավորել արտաքին լցակույտերում: 2-րդ փուլի բացահանքի շահագործման ընթացքում մակաբացման ապարները -19627207մ³ քանակով, այդ թվում ալյուվիալ առաջացումներ -1188253մ³, հանքապարփակող ապարներ -18438954մ³ նախատեսվում է պահեստավորել ներքին լցակույտերում:

Արտաքին լցակույտերը բաղկացած են 2 տեղամասերից՝ հյուսիսային և հարավային:

Հյուսիսային լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 14,9հա, պահեստավորվող ապարների քանակը 6,6մլն.մ³: Լցակույտը ձևավորվում է երեք հարկերով: Հարթակների նիշերն են 2000մ, 2050մ և 2070մ հորիզոնները, հարթակների բարձրություններն են համապատասխանաբար 55մ /առավելագույնը/, 50մ և 20մ: Լցակույտի ընդհանուր բարձրությունը կազմում է 125մ, հարկերի շեպերի թեքման անկյունը 30-35⁰:

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Հարավային **լցակույտի** զբաղեցրած տարածքը կազմում է 30,6հա, պահեստավորվող ապարների ծավալը 12,93մլն.մ³: Հարթակների նիշերն են 2100մ, 2160մ և 2210մ հորիզոնները, հարթակների բարձրություններն են համապատասխանաբար 65մ /առավելագույնը/, 60մ և 50մ: Լցակույտի ընդհանուր բարձրությունը կազմում է 175մ, հարկերի շեպերի թեքման անկյունը 30-35⁰:

Նախ ձևավորվում է հյուսիսային լցակույտը, դրանից հետո հարավայինը:

Լցակույտառաջացումը կատարվում է բուլդոզերային եղանակով:

Լցակույտառաջացման ժամանակ լցակույտերի ստորին մասերում նաև պահեստավորվում են հանքապարփակող ապարները, ապա դրանց վրա փռվում ու հարթեցվում են ալյուվիալ առաջացումները:

Լեռնային աշխատանքների կատարման ժամանակ փոշեառաջացման օջախներ են հանդիսանում բացահանքային և լցակույտատար ավտոճանապարհները, հանքախորշերը, լցակույտերը, ավտոմեքենաների բարձման և բեռնաթափման կետերը և այլն:

Ավտոճանապարհները և լցակույտերի մակերևույթները նախատեսվում է հերթափոխում ջրել 2 անգամ:

Նախագծով բացահանքի արհեստական օդափոխություն չի նախատեսվում:

Մուցքի ոսկու հանքավայրի հանքահարստացման ժամանակ կիրառվելու է պոչամբարում պինդ պոչանքների պահեստավորման տեխնոլոգիան: Պինդ պոչանքների պոչամբարը գտնվում է հյուսիսային և հարավային լցակույտերի միջև տեղադրված ձորակում: Զբաղեցրած տարածքը կազմում է 7,5հա, առավելագույն խորությունը 50մ, պոչամբարի վերին հարթակի նիշը 2040մ, տարողությունը 1274,9հազ.մ³:

Պոչամբարը շահագործելուց առաջ հատակի բերվածքային ապարները պետք է հեռացվեն և հատակին փռվի 3մմ հաստությամբ պոլիէթիլենային թաղանթ: Պոչամբարի ձևավորումը կատարվում է նրա հարավային մասից՝ պոչերի լրիվ ցամաքելուց ու չորացումից հետո:

Հյուսիսային և հարավային լցակույտերը հանդիսանում են պատվար պահեստավորված պոչերի համար: Պոչերի ցամաքեցման ժամանակ հեռացված ջրերը փակ շրջանառու ցիկլով կրկին օգտագործվում է ֆլոտացիոն աշխատանքների ժամանակ: Պոչերի չորացման հրապարակից չորացած պոչերի տեղափոխումը պոչամբար կատարվելու է ավտոինքնաթափերով, իսկ փռումը բուլդոզերով:

Պոչամբարում պոչերը պահեստավորելուց հետո մակերեսին փռվում են 0,3մ հաստությամբ ալյուվիալ առաջացումների շերտ ու հարթեցվում ռեկուլտիվացիայի նպատակով:

Հարստացուցիչ ֆաբրիկան նախատեսվում է կառուցել բացահանքի և լցակույտի միջև արտադրական հրապարակի տարածքում:

Բացահանքում բոլոր լեռնային աշխատանքները պետք է կատարվեն հանքավայրերի բաց եղանակով մշակման անվտանգության միասնական կանոններին (ԱՄԿ) հանքավայրերի շահագործման տեխնիկական կանոններին (ՇՏԿ) խստիվ համապատասխան:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է բացահանքերի արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, աշխատանքային հրապարակները, հանքախորշերը, ավտոճանապարհները, լցակույտերի բեռնաթափման հրապարակները փոշենստեցման նպատակով ջրելու համար:

Որպես խմելու և կենցաղային կարիքների համար անհրաժեշտ ջրի հավանական աղբյուր է դիտարկվում հանքավայրից մոտ 1կմ հեռավորության վրա անցնող Բռնակոթ գյուղը սնուցող ջրատարը:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՊԱՏԱՌԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՊԱՏԱՌԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ
COMMISSION OF EXPERTS

Հանքավայրի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝ բացահանքի տարածքում կատարվող արդյունահանման աշխատանքները, լցակույտերի ձևավորումը, ճանապարհներին տրանսպորտի տեղաշարժը:

Հանքավայրում գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ ընդունված է 95դԲԱ:

Գիշերային ժամերին արդյունահանման աշխատանքներ տեղամասի սահմաններում չեն կատարվելու:

Բացահանքի և լցակույտերի տարածքից մթնոլորտային տեղումներից առաջացած ջրերի հեռացում: Ջրհեռացնող առուները կառուցվում են 4 տեղամասերում. բացահանքերից արևելք (2175մ բարձունքային նիշից մինչև 2135մ բարձունքային նիշը, երկարությունը 1.1կմ, թեքությունը-0.36, ջրհավաքի մակերեսը-12հա), բացահանքերից արևմուտք (2175մ բարձունքային նիշից մինչև 2080մ բարձունքային նիշը, ջրհավաք մակերեսը կազմում է 48.6հա, ջրհեռացնող առվի երկարությունը -855մ, թեքությունը-0.11), բացահանքերից և լցակույտերից հարավ (2150մ բարձունքային նիշից մինչև 2080մ բարձունքային նիշը, ջրհավաք մակերեսը կազմում է 150հա, ջրհեռացնող առվի երկարությունը -1120մ, թեքությունը-0.062) և լցակույտերից արևմուտք (2150մ բարձունքային նիշից մինչև 2000մ բարձունքային նիշը, ջրհավաք մակերեսը կազմում է 475հա, ջրհեռացնող առվի երկարությունը -2860մ, թեքությունը-0.017): Լցակույտերի տարածքից հավաքված ջրերը ուղղվելու են Դմդդմբան գետը, այնուհետև՝ կուտակիչ ավազան:

Աշխատանքների ավարտից հետո՝ բացահանքի հատակի և լցակույտերի լեռնատեխնիկական և կենսաբանական վերջնական ռեկուլտիվացիա: Շահագործման ընթացքում իրականացվում է լցակույտային տնտեսության ձևավորում, ինչը իր մեջ ներառում է ընթացիկ ձևավորվող մակերևույթների հարթեցում (քանի որ այդ մակերևույթները հանդիսանում են հարթակներ լեռնատրանսպորտային սարքավորումների տեղաշարժի և լցակույտի զարգացման համար): Ուստի շահագործման ընթացքում լցակույտերի ընթացիկ մակերեսները բերվում են վերջնական ռեկուլտիվացման համար անհրաժեշտ տեսքի և լցակույտի ձևավորման հիմնական ծախսերը կատարվում են շահագործման տարիներին: Շահագործման աշխատանքների ավարտից հետո, խախտված հողերի վերականգնման նպատակով կատարվում է լցակույտերի վերին հարթակների, պոչամբարի մակերևույթի, բացահանքի հատակի վերջնական հարթեցում (ըստ անհրաժեշտության ապարների փռում առանձին հատվածներում) և ընդհանուր կենսաբանական վերականգնում: Այդ վերականգնվող մակերևույթների տարածքները կազմում են 23.85հա, այդ թվում հյուսիսային լցակույտ-1.9հա, հարավային լցակույտ-2.5հա, ներքին լցակույտ-11.95հա, բացահանքի հատակ-0.45հա, պոչամբար-7.5հա: Վերականգնման ենթակա ընդհանուր տարածքը կազմում է 23.85հա: Ապարների փռումը և հարթեցումը կատարվում է բուլդոզերով: Լեռնատեխնիկական վերականգնման ընդհանուր տևողությունը կազմում է 143 ժամ կամ 21 օր:

Վերջնական լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է տարածքի կենսաբանական ռեկուլտիվացիա:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի աշխատանքներից հետո, հարթեցված մակերևույթին, փխրեցված փռված հողերը կպարարտացվեն բնական պարարտանյութերի կիրառմամբ, կկատարվի Սիսիանի տարածաշրջանի տափաստանային բուսականությանը բնորոշ տարախոտա-հացազգային և լոբազգի բույսերի նախապես պատրաստված, մշակված սերմերի հիդրոցանք:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների լեռնատեխնիկական և կենսաբանական փուլերի իրականացման համար անհրաժեշտ գումարը կկազմի 6805.0հազ.դրամ:

02543163
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Մուցքի ոսկու հանքավայրի տարածքը ներառված չէ, կամ սահմանակից չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններին:

Հանքավայրի տարածքում, ինչպես նաև մոտակա Մուցք գյուղի տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Հայցվող տարածքից մոտ 3.15կմ հեռավորության վրա է գտնվում «Անտակ լիճ» բնության հուշարձանը:

Մուցք բնակավայրի պատմամշակութային անշարժ հուշարձաններից հայցվող տարածքը գտնվում է 1.8-2.2կմ հեռավորությունների վրա:

Կարմիր գրքերում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ չեն արձանագրվել:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 100.0 հազ.դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-Հորատման հաստոցները պետք է կահավորված լինեն արդիական փոշեորսիչներով, ինչը զգալիորեն նվազեցնում է հանքափոշու արտանետումները մթնոլորտ:

- Լեռնային տեխնիկայի շարժիչների վառոցքները պետք է լինեն կարգավորված, ինչը կնվազեցնի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը:

- Լեռնային տեխնիկայի և ավտոինքնաթափերի շարժիչների գազերի արտանետման վրա պետք է տեղադրվեն կատալիտիկ չեզոքացուցիչներ, ինչը թույլ է տալիս կրճատել գազերի արտանետումները մթնոլորտ:

- Տաք և չոր եղանակին բեռնվող լեռնազանգվածը, արտադրահրապարակը, մերձատար ճանապարհների տարածքում պետք է կատարվի ջրցանում՝ օրական 2-3 անգամ, ինչը թույլ է տալիս կրճատել փոշու արտանետումները:

- Կատարվելու է լցակույտերի մակերեսների ընթացիկ ռեկուլտիվացիա, ինչը կկրճատի լցակույտի մակերեսից փոշու ծավալները:

- Կատարվելու է մթնոլորտային օդում փոշու և աղտոտող նյութերի պարբերական մոնիթորինգ, ստացված տվյալների վերլուծություն, ըստ անհրաժեշտության բնապահպանական միջոցառումների վերանայում:

- Արդյունահանման ենթակառուցվածքների և Մուցք գյուղի միջև տնկվելու է պաշտպանիչ անտառաշերտ՝ բարդի, ակացիա, հացենի և սոճի ծառատեսակների կիրառմամբ:

-Ավտոինքնաթափերի լվացման համար նախատեսվում է շրջանառու համակարգ, ինչը թույլ կտա բացառել մեքենաների լվացումից առաջացած կեղտաջրերի արտահոսքը շրջակա միջավայր:

- Ճանապարհների խճապատում, ինչը կնվազեցնի փոշեգոյացումը և հնարավորություն կտա կրճատել փոշենստեցման համար օգտագործվող թարմ տեխնիկական ջրի ծախսը:

- Բացահանքի տարածքի տնտեսա-կենցաղային կեղտաջրերի մաքրման համար նախատեսվում է տեղադրել արդիական ինքնավար կենսաբանական մաքրման կայան:

- Մակերևութային ջրերում աղտոտող նյութերի պարբերական մոնիթորինգի իրականացում, ստացված տվյալների վերլուծություն, ըստ անհրաժեշտության բնապահպանական միջոցառումների վերանայում:

-Կենցաղային աղբի տեսակավորված հավաքում, պահում ամուր փակվող կոնտեյների մեջ, աղբի տեղափոխում Սիսիանի գործող աղբավայրեր:

-Բեռնատար մեքենաների տեղաշարժ նախապես մշակված և համաձայնեցված մշակված գրաֆիկով՝ կուտակումները բացառելու նպատակով:

– Աղմուկի աղբյուր հանդիսացող մեքենաների շարժիչների կահավորում հատուկ ձայնամեկուսիչ պատյաններով:
– Տեխնոլոգիական սարքավորումների տեղադրում տատանումներ մեկուսացնող հատուկ հիմքերի վրա:
– Բաց դիմածածկոցներով սարքավորումների և մեխանիզմների շահագործման բացառում:
– Աշխատակիցների ապահովում աղմուկից պաշտպանվելու անհատական միջոցներով:
– Աղմուկի մակարդակի պարբերական վերահսկում բացահանքի տարածքում, Մուցք գյուղում:
- Խախտված տարածքների ռեկուլտիվացիա:
-Աղմուկի նվազեցման նպատակով նախատեսվում է մեքենաները սարքավորել ձայնախլացուցիչներով:
-Աշխատակիցների տնտեսական-կենցաղային կարիքների ապահովման նպատակով արտադրական հրապարակում տեղադրվում են բեռնարկղային տիպի տնակներ՝ հանգստի և սննդի ընդունման համար: Կահավորվելու է 3 լվացարան, դաշտային տիպի ջրցուղարան, զուգարան: Տնտեսակենցաղային կեղտաջրերն ուղղվում են ինքնավար կենսաբանական մաքրման կայան, այնուհետև մոնիթորինգից հետո՝ Դմբդմբան գետը:
-Հանգստի համար նախատեսված տնակներում պարտադիր տեղադրվելու են առաջին բժշկական օգնության պարագաներ:
- Նախատեսվում են կենսաբազմազանության՝ բուսական և կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ:
Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

Մոնիթորինգի ենթակա պարամետրերը	Մոնիթորինգի վայրը	Ազդեցության դրսևորման հիմնական աղբյուրները	Մոնիթորինգի տեսակը
1	2	3	4
Անօրգանական փոշի, ծխագազեր	Բացահանք	Հանույթաբարձման աշխատանքներ, մեքենաների տեղաշարժ, հորատման և պայթեցման աշխատանքներ	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
	Լցակույտ	Լցակույտառաջացման աշխատանքներ, լցակույտի մակերեսից բնական տարուք	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ

Հողային ռեսուրսներ	Ձեռնարկության արտադրական տարածք	Աղտոտում նավթամթերքներով մեխանիզմների, մեքենաների աշխատանքի հետ կապված, հանքափոշու նստեցում	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, ամսեկան մեկ անգամ
	Լցակույտում պահեստավորված հողի բերրի շերտ	Քիմիական կազմ, հումուսի պարունակության կորուստ	Նմուշառում, լաբորատոր հետազոտություն, տարեկան մեկ անգամ
Բաց ջրավազաններ	Դմբդմբան գետակ Դմբդմբան գետակի Անանուն վտակ	Արդյունահանման աշխատանքներ, կենցաղային արտահոսքեր	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, շաբաթական մեկ անգամ
Աղմուկ և թրթռումներ	Բացահանք Մուցք գյուղ	Ծանր տեխնիկայի տեղաշարժ, լեռնային զանգվածի բարձման-բեռնաթափման աշխատանքներ	Չափիչ սարքերի կիրառում, տարեկան մեկ անգամ
Բուսական ծածկ և կենդանական աշխարհ (վայրի բնության ներկայացուցիչների քանակ՝ աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն)	Բացահանքի և ենթակառուցված քների առաջարկվող և հարակից տարածքներ	Բացահանքի շինարարություն և շահագործում, լցակույտառաջացում	Դիտողական զննում, երթուղիներ, ֆոտոթակարդներ, հետքերի, սննդի մնացորդների և էքսկրեմենտների զննում, տարեկան մեկ անգամ
Թափոններ	Արտադրական տարածքում հատուկ հատկացված վայրեր, լցակույտ	Պահեստավորված նավթամթերքներ պարունակող թափոններ, մակաբացման ապարներ	Տեսողական զննում, նույթերի ճշգրիտ տեսակավորում և պիտակավորում, գործող կանոնակարգերի և թափոնների կառավարման պլանի պահպանում

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
43163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Պատճառաբանական մաս. Սյունիքի մարզի Մուցք բնակավայի վարչական ղեկավարի նստավայրում, օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Սյունիքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Հարստացուցիչ ֆաբրիկան և պոչամբարը կառուցելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով՝ ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:
- Բացահանքի աշխատանքային գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
- Պայթեցման աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է ապահովել անվտանգ հեռավորությունը, որն ընդունված է համաձայն ՀՀ Կառավարության 2008 թվականի հունիսի 3-ի N291 որոշմամբ հաստատված «Պայթեցման աշխատանքների անվտանգության միասնական կանոններ»-ի (ԱՄԿ) թիվ 8 հավելվածի 1, 2 և 3 կետերում բերված պահանջների.

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Գեոռեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Մուցքի ոսկու հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ Հովիկ Մեսրոպյան